

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ օրը, «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց» ազգային-եկեղեցական մեծ տոնի օրը, հանդիսավոր իրադրության մեջ, կատարվեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1960—1961 ուսումնական տարվա պաշտոնական բացումը։

Առավոտյան ժամը 11-ին, սուրբ պատարագից հետո, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամներով, ժամանում է Հոգևոր Ճեմարան և «Աշակերտք Քրիստոսի» շարականի երգեցողությամբ առաջնորդվում Ճեմարանի հանդիսությանց սրահը։

Ապա կարդացվում է Սերմնացանի առակը (Մատթ. ԺԳ 4—9)։ «Որք զարդարեցին» շարականից հետո վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը արտասանում է բարի գալստյան ջերմ խոսք Վեհափառ Հայրապետին.

«Վեհափա՛ռ Տեր.

Բարի գալուստ Ձերդ Ս. Օծության, Հոգևոր Ճեմարանի այս հարկին տակ, չորս ու կես ամիսներու կարոտեն վերջ։

Նոր կյանքի մը առավոտն է, որ կողջունենք Ձեզ հետ, Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը և ուսանողությունը։

Արդարև, դպրոցականի մը ուսումնական տարին շատ նման է օրվան մը ամրողջական շրջանին։ Արեգակի ծագման հետ կակսին դայլայլները բյուրավոր թռչուններու, և երբ օրը կամաց-կամաց կհառաջանա, անոնք, կարծես խոնջած օրվան հոգնությունները, իրիկվան հանգիստը կփնտռեն գիշերվան կաղդուրիին մեջ։

Շնորհիվ Ամենակալին, անցնող տարվան ուսումնական մեծ երեկոյան հասանք լավագույն արդյունքներով, և մեր ուսանողները, ամառվան արձակուրդին կաղդուրված, այսօր ուրախությամբ կողջունեն ուսումնական նորաբաց այս արշալույսը։

Կամքն անկախ պատճառներով ամիս մը ուշացավ մեր Ճեմարանի պաշտոնական վերաբացումը, բայց այսօր հոգևին ուրախ ենք, որ Հոգևոր Ճեմարանը նորեն իր հյուրընկալ դռները կբանա մեր ուսանողներուն առջև, Ձեր օրհնությամբ։

Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, իր ուսուցչական կազմով և ուսանողներով, այս նորաբաց առավոտուն Ձեզի կուգա, խնդրելով Ձեր հայրապետական օրհնությունը, Գերագույն Հոգևոր Խորհուրդի և միաբանության աջակցությամբ, որպեսզի այս տարի ևս ըլլաք մեզ հետ հառաջիկա մեր սուրբ գործին մեջ։ Հավատացած ենք, թե Ձեր բարի կամեցողության և օրհնության մեջն են մեր բոլոր հաջողությունները։

Բաշխեցե՛ք մեզ, Վեհափա՛ռ Տեր, Ձեր հայրական սուրբ օրհնությունները և խրատները, և այդ օրհնությամբ թող իմաստնանան Ձեր հոգևոր դավակները հավատքի և գիտության այս սրբազան հարկին տակ։

Թող ամենաբարին Աստված երկար և խաղաղ կյանք պարգևե Ձերդ Ս. Օծութեան և բովանդակ աշխարհին, որպեսզի վայելեք արդյունքները Ձեր սերմանած բարիքներուն և արդյունքը Ձեր շինարար աշխատանքին։

Թույլ տվեք, Վեհափա՛ռ Տեր, ի դիմաց իմ ուսուցչական կազմի և ամբողջ ուսանողության, մատչիլ ի համբույր Ձերդ Սրբության օծյալ Ս Աջույն և ընդունիլ Ձեր հայրապետական օրհնությունները»։

Այնուհետև Ա լսարանի ուսանող Հովհաննես Աշճյանը, ի դիմաց Հոգևոր Ճեմարանի իր ուսանող եղբայրների, կարդաց հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տե՛ր.

Այսօր նորից Հոգևոր Ճեմարանի զանգակի քաղցր ղողանջը մեզ հավաքել է այս նվիրական հարկի տակ, լինելու Ձեզ հետ և առնելու Ձերդ Ս. Օծության հայրական օրհնությունը և խրատները։

Հոկտեմբերի այս առաջին օրերին, երբ մեզ նման բյուրավոր պատանի հոգիներ, գրքերը իրենց անութների տակ, մեր աշխարհի ամեն կողմը, դիմում են դեպի լույսի վառարանները, մենք էլ, Ձեր օրհնությամբ, նորից մտնում ենք, նույն հույզերով և ապրումներով, մեր սիրելի Հոգևոր Ճեմարանի շեմքից ներս։

Գոհ ենք և երջանիկ Հոգևոր Ճեմարանի այս շրջանակի մեջ, որտեղ խնկաբույր մի մթնոլորտ, անուշությամբ զեղուն, պարուրում է մեր հոգիներն ու սրտերը։

Վեհափառ Տե՛ր.

Ուխտի զավակներ ենք մենք ամենքս էլ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և Ձերդ Վեհափառության։ Մայր տաճարի սուրբ կամարների տակ պիտի աղոթենք, որ մեր պապերի Աստվածը մեզ էլ մի օր արժանավորությամբ բարձրացնի և հասցնի մինչև իր ծառայության Ս. Սեղանի բարձունքին։

Այս խորհրդավոր և հուզիչ պահին, Հոգևոր Ճեմարանի ուսանողներս սրտեռանդն աղոթում ենք առ Աստված, որ պահի Ձերդ Ս. Օծության կյանքը, եռանդ և առողջություն պարգևի մեր սիրելի սրբազան վերատեսչին և դասախոսական կազմին, որպեսզի նոր եռանդով սկսվող այս տարին ևս պսակենք հաջողությամբ։

Այս սրտագին մաղթանքներով, ի դիմաց Հոգևոր Ճեմարանի համայն ուսանողության, մատչում եմ ի համբույր օծյալ Ձեր Ս. Աջույն»։

Հոգևոր Ճեմարանի երգչախումբը երգեց Մայր Աթոռի հիմնը՝ «էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա», որից հետո, ընդհանուր լռության մեջ, խոսք առավ Վեհափառ Հայրապետը և հայրական իր պատգամը ուղղելով Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմին, ուսանողության, Հյուրերին և բոլոր ներկաներին, ասաց.

«Սիրելի՛ սրբազան եղբայրներ, հարգելի՛ պր. Հովհաննիսյան, արտասահմանյան հյուրեր և շատ սիրելի սաներ.

Այսօր Հոգևոր Ճեմարանը իր դռները լայն կբանա և կսկսի նոր՝ 1960—1961 ուսումնական տարեշրջանը։ Այս պահերը մեզ համար ուրախ առիթներ են և մեր սրտերը կլեցնեն խաղցր հույզերով և հույսերով։

Մենք խոր հավատ ունինք, որ այստեղ, այս սուրբ հաստատության մեջ, մեր ուսանողության մատաղ հոգիները պիտի կարենանք դարբնել՝ նվիրելու համար մեր Եկեղեցին և մեր ժողովրդին։

Մենք վստահ գիտենք, որ ոչ բոլորը այստեղ կմնան իրենց ուխտին հավատարիմ. բայց վստահ ենք նույնպես, որ քանակը չէ մեր շափանիշը, այլ որակը։ Մենք որակը նախընտրելու ոգիով կառաջնորդվինք։ Քիչեր միայն կգտնվին, որ հոգևոր ասպարեզին մեջ հաստատակամ մինչև վերջ կմնան։ Իսկ անոնք, որ մակերեսային հավատքով կամ անկայուն սրտով մեր մեջ կգտնվին, վաղ թե ուշ, կա՛մ կհեռացվին մեր կողմե, կա՛մ իրենք կհեռանան։

Այս հանդիսավոր առիթով կշնորհավորենք Հայկազուն սրբազանը մանավանդ, որ կրկին նորոգելով իր ուխտը Երուսաղեմի Ս. Սեղանին առաջ, նոր եռանդով վերադարձած է Մայր Աթոռ և Իջման Ս. Սեղանին առջև անգամ մը ևս ուխտած՝ վերջնականապես մնալ Մեր կողմին։ Վստահաբար այնտեղ, Երուսաղեմի մեջ, սրբազանին վերապահված կըլլար ավելի մեծ պաշտոն և ավելի բարձր դիրք, սակայն ինքը նախընտրեց մնալ Մեր կողմին, որպեսզի իր նպաստը կարողանա բերել Հոգևոր Ճեմարանի անման ու զարգացման վեհ գործին։

Գնահատանքի ջերմ խոսք կուղղենք նաև Հոգևոր Ճեմարանի մեր դասախոսական կազմին, որ իր կարելին և ավելին նույնիսկ ի գործ կդնե, որ մեր Ճեմարանը հառաջդիմե՝ հասնելով իր նպատակին։

Շնորհավորելով մեր ուսանողությունը և դասախոսական կազմը, բացված կնայատարեմ Ճեմարանի 1960—1961 ուսումնական տարին։

Սիրելի՛ ուսանողներ, երկու խոսք ունինք նաև ձեզ ուղղված։ Ինարկե դուք գիտեք Մեր ճանապարհորդության մասին Ամերիկա, Հյուսիսային թե Հարավային, նաև Ֆրանսա, ուր կապրին ավելի քան չորս հարյուր հիսուն հազար հայեր։ Ամեն տեղ Մենք ուրախությամբ և ոգևորությամբ խոսեցանք Մայր Ա-

բոռի և Հոգևոր ճեմարանի մասին, միշտ վկայություններ տալով բոլորին, որ իսկապես մեր ճեմարանը հավատքի, գիտության և հայրենասիրության սրբազան օջախ մըն է, ուր բոլորս, մեր բովանդակ սրտով ու հոգիով, ոգևորությամբ և խանդավառությամբ կաշխատինք: Ճշմարիտ, հավատավոր հոգևորականներու կարիքը մեր ժողովուրդը շատ ունի: Այսօր իսկ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեջ 7—8 եկեղեցիներ թափուր մնացած են: Նույնը Հարավային Ամերիկայի և Ֆրանսայի մեջ: Ահա թե ինչու կաշխատինք միացյալ՛ուժերով, կատարյալ պատրաստությամբ մշակներ դաստիարակելու մեր եկեղեցիին համար: Մեր ժողովուրդը ծարավի է Ավետարանի խոսքին, հայրենասիրական խոսքին: Մեր եկեղեցին և մեր եկեղեցականները բացառիկ դեր մը ունին կատարելու ներկա պայմաններում մեջ: Մենք կաղոթենք, որ դուք անիք ու զորանաք, պատրաստվիք հոգիով ու մտքով այն վեն նպատակին, որուն համար կոչված եք այստեղ:

Կմաղթենք ձեզ ուժ և անսպառ եռանդ և հարատևության ոգի, կմաղթենք, որ արժանի դառնաք այն շնորհներուն, որ ձեզ կբաշխվին այս սուրբ հաստատության մեջ, այս աստվածակառույց կամարներուն տակ:

Կեցցե՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, կեցցե՛ մեր Հոգևոր ճեմարանը»:

Բուռն ծափերի տակ վերջացրեց Վեհափառ Հայրապետը Իր խրատականը, օրհնելով բոլորին:

Հոկտեմբերի 10-ին, երկուշաբթի օրը, սկսվեցին կանոնավոր դասավանդությունները Հոգևոր Ճեմարանում: